ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023թ. հոկտեմբերի 29-ից հոկտեմբերի 31-ը ամենամյա «Միջազգային մաքսային ֆորում – 2023-ին» մասնակցելու նպատակով ք. Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն) այցի արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝

Աշոտ Մուրադյան - ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ,

Ռաֆայել Գրիգորյան - ՀՀ պետական եկամուտների կոմիտեի տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության պետի տեղակալ,

Անդրանիկ Գևորգյան - ՀՀ պետական եկամուտների կոմիտեի մաքսանենգության դեմ պայքարի վարչության պետի տեղակալ,

Արփինե Գրիգորյան - ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջազգային համագործակցության վարչության մաքսային համագործակցության բաժնի գլխավոր մաքսային տեսուչ:

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

քաղաք Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն) 2023 թվականի հոկտեմբերի 29-31-ը

3. Հրավիրող կողմը՝

ՌԴ Դաշնային մաքսային ծառայություն

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Ֆորումը համարվում է միջազգային մակարդակով ԵԱՏՄ շրջանակներում մաքսային թեմատիկայով ամենախոշոր միջոցառումներից մեկը, որը հնարավորություն է տալիս մաքսային ծառայությունների ներկայացուցիչներին, պետական մարմիններին, գործարար միջավայրին ևս մեկ անգամ ծանոթանալու մաքսային բնագավառում նոր ձեռքբերումներին, մասնագիտացված փորձի փոխանակմանը, ամրապնդել գործընկերական հարաբերությունները և ներդրում ունենալ միջազգային մաքսային բնագավառում հետագա զարգացման համար:

Ֆորումի շրջանակներում տեղի է ունեցել շնորհանդեսների ցուցադրություն, բաց քննարկման հարթակների կազմակերպում և ցուցահանդեսային տաղավարների ցուցադրում՝ ըստ անդամ պետությունների: Ֆորումի շրջանակներում Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունները, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեն ներկայացել է իր տաղավարով, որտեղ ցուցադրվել է տեսանյութ՝ վերջին ժամանակաշրջանում մաքսային ոլորտում իրականացված բարեփոխումների վերաբերյալ:

5. Քննարկված թեմաները՝

Ֆորումի գործնական մասում ներառված են եղել 25 միջոցառումներ, որոնք վերաբերում էին մաքսային գործի տարբեր բնագավառներին, այդ թվում՝ արտաքին տնտեսական գործունեության թվայնացմանը, տրանսպորտային լոգիստիկ միջանցքների զարգացմանը, էլեկտրոնային առևտրի հետ զարգացմանը և այլ հարցերի:

Գործուղման ընթացքում ՀՀ ՊԵԿ պատվիրակությունը մասնակցել է «Թմրանյութերի և ծխախոտային արտադրանքի մաքսանենգության դեմ պայքար. տեղեկատվության փոխանակման ժամանակակից տեխնոլոգիաներ», «Անդրսահմանային գործարքների արագացումը՝ Ռուսաստանի նոր միջազգային առևտրի զարգացման բանալի», «Ռիսկերի կառավարման համակարգը ԵԱՏՄ-ում. մաքսային հսկողության միասնական ստանդարտի ճանապարհին» և մի շարք այլ նիստերի քննարկումներին:

6.Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Ֆորումի շրջանակներում հոկտեմբերի 30-ին «Անդրսահմանային գործարքների արագացումը՝ Ռուսաստանի նոր միջազգային առևտրի զարգացման բանալի» խորագրով պանելային նիստի ընթացքում ելույթ է ունեցել նաև Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Աշոտ Մուրադյանը: Ելույթի ընթացքում ՊԵԿ նախագահի տեղակալը ներկայացրել է Հայաստանի Հանրապետությունում կիրառվող թույլտվության փաստաթղթերի մասով Պետական եկամուտների կոմիտեի ծրագրային մշակումը, որն ամբողջությամբ ներդրված է Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրի ոլորտում ազգային «Մեկ պատուհան» հարթակի շրջանակներում՝ իր մեջ ներառելով թույլտվության փաստաթղթերի տրամադրմամբ զբաղվող բոլոր ազգային գերատեսչություններն ու արտահանման կենտրոնները:

Ֆորումի շրջանակներում հոկտեմբերի 31-ին տեղի է ունեցել «Ռիսկերի կառավարման համակարգը ԵԱՏՄ-ում. մաքսային հսկողության միասնական ստանդարտի ճանապարհին» խորագրով պանելային նիստ: Վերջինիս ելույթով մասնակցել է նաև ՀՀ ՊԵԿ տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության պետի տեղակալ Ռաֆայել Գրիգորյանը և ներկայացրել ռիսկերի կառավարման համակարգը՝ ընդգծելով, որ այն մաքսային հսկողության կարևորագույն և հիմնաքարային բաղկացուցիչներից է: Ֆորումի մասնակիցներին է ներկայացվել Պետական եկամուտների կոմիտեի վերջին ծրագրային մշակումներից մեկը՝ «Սահմանահատման հսկողության ինտեգրացիոն համակարգը», որն ապահովում է մաքսային և սահմանապահ հսկողության համակարգերի միջև փոխգործակցությունը՝ բացառելով կրկնակի հսկողության իրականացումը, սահմանապահ գերատեսչությունների միջև համագործակցությունը, ռիսկերի կառավարման համակարգի շրջանակներում ամբողջական հսկողության ապահովումը:

Ֆորումի շրջանակներում հոկտեմբերի 30-ին երկկողմ հանդիպում է տեղի ունեցել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Աշոտ Մուրադյանի և Իրանի Իսլամական Հանրապետության մաքսային

ծառայության ղեկավարի տեղակալ Ֆորոուդ Ասգարիի միջև: Հանդիպմանը քննարկվել են մաքսային ոլորտում երկկողմ համագործակցության և գործընկերության օրակարգի մի շարք հարցեր, այդ թվում՝ կողմերի միջև նախնական էլեկտրոնային տվյալների փոխանակմանն ու սահմանների համալիր կառավարմանն առնչվող հարցեր:

7.Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Գործուղումը տեղի է ունեցել նիստերի և կլոր սեղանների ձևաչափով, ինչով պայմանավորված փաստաթղթեր չեն ստորագրվել, որոշումներ չեն կայացվել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Կլոր սեղանի ձևաչափով կայացած քննարկման ժամանակ առաջարկվել է մասնակից պետություններին ակտիվորեն կիրառել տեղեկատվության փոխանակման հարթակները/ մասնավորապես՝ ՀՄԿ-ի CenComm հարթակը/, ինչը կնպաստի թմրանյութերի և ծխախոտային արտադրանքի մաքսանենգության դեմ պայքարի ուժեղացմանը:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Աշոտ Մուրադյան

Ռաֆայել Գրիգորյան

Անդրանիկ Գևորգյան

Արփինե Գրիգորյան

03/11/2023թ.